



ԳԵՎՈՐԳ ՄԱԴՈՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՀԱՅՐԵՆԱՇՈՒՆՉ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

(Ծճնդյան 100-ամյակի առթիվ)

Հայրյոր տարեկան է դառնում Հովհաննես Թումանյանը, հայ խոշորագույն բանաստեղծներից մեկը, որի հայրենաշունչ բանաստեղծություններն ու արձակ գործերը բազմաթիվ սերունդներ անգիր գիտեն, սովորել են ու սիրել մայրենի լեզվով առաջին բառերը թոթովելու հետ մեկտեղ: Այդ օրվանից էլ բանաստեղծը դարձել է նրանց ուղեկիցը, իր իմաստուն խորհուրդներով, լավատեսությամբ ուսուցանել հայրենասիրություն, մարդասիրություն, ազնվություն:

Լայն է Թումանյանի ընթերցողների շրջանակը. նրա երկերից հոգեկան սնունդ և գեղարվեստական հաճույք են ստանում մանուկն ու ծերը, գրողն ու արվեստագետը, քաղաքական ղեկավարն ու հոգևոր հովիվը, նարտարապետն ու բժիշկը, համեստ կրթություն ստացած քաղաքացին ու ակադեմիկոսը: Այս բանը քիչ գրողների մասին կարելի է ասել:

Ամեն մի հայկական օջախում ամեն օր հնչում է Թումանյան բանաստեղծի ու դաստիարակի սրտագրավ խոսքն ու խրատը: Ամեն մի հայի առօրյայում ու վարքագծի մեջ ինչ-որ թումանյանական բան կա: Այս է բացատրիկն ու հիմնականը, որով բնութագրվում է ազգային այս մեծ բանաստեղծի արվեստն ու վաստակը: Դա այն է, ինչը ընդունված է անվանել գրական գործչի ստեղծագործության ժողովրդայնություն:

Այո՛, Թումանյանը ամենաժողովրդական բանաստեղծներից մեկն է: Նա ամենասերտ

կապերով կապված է եղել իր ժամանակի հետ, եղել է ազգային գրականության, արվեստի, պատմության, հասարակական բոլոր իրադարձությունների կենտրոնում, իր երկերում հարազատորեն արտահայտել հայրենի ժողովրդի նվիրական իղծերը, նրա աշխարհայացքը:

Թումանյանի կերպարի մեջ միահյուսված են հանդես գալիս մեծ բանաստեղծն ու մեծ համբավի տեր գրական քննադատը, որը պայքարում է հայ գրականության առևանգանքից համար, հարվածում հայ գրողի պատիվն ու իրավունքը ոտնահարող՝ «ամեն բարի աշխատանք ուրացող, ամեն ազնիվ ու գեղեցիկ գործի չարախոսող, գրական մեծությունները սանձահարող անսանձ փոքրություններին», զարգացնելով այն համոզմունքը, որ իր ժամանակի համար այնքան բնորոշ միտումնավոր քննադատությունը չի կարող իր ուղուց շեղել իսկական գրողին և այդ աչառու քննադատության մարզանքները վերջին հաշվով «դատարկ բաներ են այն չքննող գիտակցության հանդեպ, թե դու պաշտոն ես տանում գեղեցկին ու ճշմարտին, ու կյանքի բոլոր անախորժ օրերը ոչինչ են այն ոգևորության սրբազան վայրկյանի առաջ, որը ընդունակ է վայրկեանաբար թոթափել այդ ամենը ու մարդուն միշտ վերածնել հավերժական ֆենիքսի նման»:

Մեծ բանաստեղծը միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես հրապարակախոս

և ձեռներեց քաղաքացի, մանավանդ 1910-ական թվականներին՝ իր ժողովրդի գերմարդկային տառապանքի օրերին, նա ապրում էր միայն ու միայն իր ժողովրդի հոգսերով: Իր տանը, ստեղծագործության պա-

նրան ուղղություն տվողը իր ժողովրդի վիշտն ամոքելու և տառապանքը թեթևացնելու հոգսն էր: Ժամանակակիցների վկայությամբ նա դարձել էր ոչ միայն գրականության, այլև հասարակական կյանքի



Հովհաննես Թումանյան

հին թե «Վերնատան» ասուլիսներում վիճաբանելիս, հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում նախագահելիս թե դասախոսելիս, որբերին ու գաղթական հայության համար հաց ու օթեան որոնելիս՝

կենտրոնաձիգ ուժը, ամենքի խորհրդատուն ու աջակիցը, ամենքի պաշտպանը:

Թումանյանի առաջին տպագիր գործերը երևացին 1890-ական թվականների սկզբին և ինքնահատուկ գեղեցկությամբ, մտքի

հատակությամբ ու համոզչությամբ իրենց վրա հրավիրեցին գրական շրջանների ու շաղկապների: Առաջինը Ղազարոս Աղայանը ողջունեց նրա մոտքը գրականության մեջ, արժանին հատուցելով նրա տաղանդին՝ փայլուն ապագա գուշակեց նրա համար: Այնուհետև երիտասարդ բանաստեղծը Աղայանի աչքի առաջ հասակ առավ և առնականացավ:

Պատկերավոր կերպով է բնորոշել Թումանյանի մոտքը հայ գրականության մեջ նրա ժամանակակիցներից Ավետիք Իսահակյանը, որը գրել է. «Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից, բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուրթի ու բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող մեծ բնությունը՝ փոեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը»:

Ի՞նչ տվեց Թումանյանը իր ժողովրդի և աշխարհի գրականությանը: Ավելի շատ բան, քան հնարավոր է մի կյանքի համար: Եվ դա, անշուշտ, այն պատճառով, որ ապրեց իմաստուն, ժողովրդական առաջամարտիկի բովանդակալից կյանքով:

Նրա մանկությունն անցավ պատմական հիշատակներով հարուստ Լոռու բնաշխարհում, նահապետական կյանքով ապրող գյուղական միջավայրում, որն անցնելի տապալկություններով հարստացրեց նրա վաղուհուն միտքը: Մանկուց նա տեսավ հայ գեղջուկի չարքաշ ու անապահով կյանքը, նրա հարստահարությունը գյուղական ցեղերի ու ցարական պաշտոնյաների ձեռքով և այդ բոլորն արտացոլեց իր գեղարվեստական ստեղծագործության մեջ: Նա ստեղծեց չափածոյի և արձակի փայլուն գլուխ-գործոցներ, տվեց ժողովրդական բանահյուսության և վիպերգության հրաշալի մշակումներ, գեղարվեստական խոսքի հոյակապ կոթողներ՝ զգացածի ու ապրածի խոր բացահայտմամբ, թումանյանական գործի անհատականության կնիքով, որոնք հսկայական չափով առաջ մղեցին հայրենի գեղարվեստական մշակույթը:

Բանաստեղծի անկրկնելի «Անուշը», «Լոռեցի Սպարն», «Հառաչանքը», «Հին օրհնությունը», «Գութանի երգը» և այլ տառնյակ մեծ ու փոքր գործեր, որոնցից ոչ մեկն անծանոթ չմնաց հայ մարդուն, հայերեն լեզվով գրված և հայ գյուղաշխարհի խստաշունչ բնության յուրահատուկ գեղեցկություններն ու հայ շինականի «հառաչանքի ողորմունկ ձայնը» աշխարհին հաղորդող գործեր են: Դրանք իրենց անխառն բնական գույներով, մարդկային հոգու հետ խոսող մտեր-

միկ շեշտով հուզել ու հուզում են հայ մարդուն: Եվ ոչ միայն հայ մարդուն:

Թումանյանի ստեղծագործությունը իր ժամանակի հարազատ համայնապատկերն է, բայց և դպրոց բոլոր ժամանակների համար: Իր ապրած ժամանակում հայրենի ժողովրդի կյանքի դժնդակ պայմանների նկատմամբ նրա ցայտուն ու դիպուկ բնորոշումներն ու եզրակացությունները անվերելա մատնանի են ամուսնացած կյանքի հսկայականությունները, ցույց տալիս դրանք ծնող պատճառները: Մի ամբողջ պատմաշրջանի պատկերն է բացում մեր առջև Թումանյանի «Հառաչանք» պոեմի հերոս իմաստուն ծեղունին իր մի հատիկ բնորոշմամբ.

Դարձել է աշխարհը, ախպեր, առ ու փախ,
Սերը՝ դարձել սուր ու ջուրը՝ արին.
Ո՛չ ամոթ ունի ուժեղը, ո՛չ վախ,
Վայը եկել է, տարել տկարին:

Այս մի քառյակում հեղինակին հաջողվել է խտացնել ոչ միայն իր հերոսի, այլև ամբողջ գյուղացիության տրտունցն ու բողբոջ շավիղից դուրս եկած աշխարհի կարգերի դեմ և միանգամայն հասկանալի դարձնում պոեմում նկարագրվող դեպքերը, այն՝ թե ինչո՞ւ համար քանի-քանի մարդ փախել է իր տնից, քանի-քանի մարդ դարձել մարդասպան:

Բանաստեղծն այդպիսի գործի ընդհանրացումներ է կատարում նաև պատմական անցյալին կամ ժողովրդական ավանդություններին անդրադառնալիս: Անարդար աշխարհի դեմ բանաստեղծի դատաւճիռն ենք կարդում նրա «Թագավորն ու չարչին» հանրահայտ գործում: Որոշ հոռետեսական շեշտ կա այդ բանաստեղծության մեջ.

...Ու միշտ, քանի որ կա
Ծախ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր...

Աշխարհի այդ անարդար օրենքների արդյունք են մարդկային բոլոր արատները՝ ստորաբարձրությունը, կեղծիքը, խաբեությունը: Մարդը դեռ շատ հեռու է մարդ լինելուց, միայն այդ հասարակական չարիքների ոչնչացմամբ կարելի է վերագտնել իսկական մարդուն: Եվ բանաստեղծն ստեղծում է այդ իսկական մարդու ըղձալի կերպարը.

Անց են կենում... Միայն անմահ
Գործն է մնում լավ ու վատ.
Բայց երանի ով մարդ կգա
Ու մարդ կերթա անաքատ...

Անարդար օրենքներով ղեկավարվող աշխարհում ոտնահարվում է մարդու արժանապատվությունը. մարդը նվաստացած է, նրան պատել է վիշտն ու վհատությունը: Բանաստեղծի սրբազան պարտքն է նեցուկ դառնալ մարդուն: Պարտքի այդ խոր գիտակցության ապացույցներ ենք գտնում Թումանյանի բոլոր, և նույնիսկ ամենավաղ շրջանի, բանաստեղծություններում.

Միտ տոյր ընկածին, գետնից վեր քաշիր.
Մի թողնիր երբեք, որ մնա նա ցած.

Կենդանի երգով զարթեցրու, շարժիր
Զգացմունքները նրա վհատած...

Բայց բանաստեղծն ապրում էր հատկապես իր ժողովրդի համար տագնապալից ու ողբերգական պատմաշրջանում: Նա ակամատես էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի նկատմամբ թուրք կառավարության կողմից գործադրվող ցեղասպանության հանցավոր քաղաքականության բերած շարունակական աղետներին: Բնականաբար նրան միևնույն ժամանակ խորքը հուզում էր իր ժողովրդի քաղաքական բախտը, և նա ցատու մով նշավախում էր այդ ոճրապարտ քաղաքականությունը՝

Ու հոսում, հոսում, հոսում է անմեղ
Արյուն-արցունքը տարաբախտ ազգի...

Խոհուն ու խորհրդավոր կանգնած նորի ու հնի սահմանագծում, բանաստեղծը սրտի կսկիծով էր տեսնում իր ժողովրդի տառապանքը, որից կտոր-կտոր էր լինում նրա հայրենասեր հոգին.

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին.
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին...

Բանաստեղծի՝ հայրենի երկրի «աղեկեզ թառանչից» մղկտացող սիրտը անձկությամբ սպասում էր՝

Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝

Հայոց լեռներում,
Բարձր լեռներում...

Եվ այստեղ է, որ բանաստեղծը հանդես է բերում իր հոգեկան կորուվը. նույն շարքի մի այլ հայրենաշունչ բանաստեղծության մեջ իր գոտեպնդիչ խոսքն է ասում հայրենի ժողովրդին, մարդկանց սրտերը ջերմացնում ապագայի հույսով.

Բայց հին ու նոր քո ցավերով կանգնած
ես դու կենդանի,
Կանգնած խոհուն, խորհրդավոր ճամփին
նորի ու հնի.

Հառաչանքով սրտի խորքից խոսք ես
խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տան-
ջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի
ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգ-
տում է մեր հոգին—

Հույսի՝ հայրենիք,
Լույսի՝ հայրենիք:

Թումանյանի բանաստեղծական խոսքը ստեղծվում է տարբեր բանաստեղծական չափերի ու կշռույթի օգտագործմամբ, դառնում հուզիչ, անմիջական: Նրա հայրենասիրական բանաստեղծություններում, անձնական քնարերգության նմուշներում, քառյակներում, անգամ այն գործերում, ուր խոսվում է կենցաղային բնույթի հարցերի մասին, հեղինակը հանդես է գալիս երևույթի պատմա-փիլիսոփայական գնահատմամբ: Հետևաբար չկա երևույթ, որ մնա իր նախնական աստիճանի վրա. հեղինակն այն միշտ հասցնում է պատմա-փիլիսոփայական բարձրության և այնպես հրամցնում ընթերցողին:

Այս բոլորի շնորհիվ Թումանյանի բանաստեղծական ամեն մի քառյակը, ամեն մի ասույթը ճանաչողական մի ուժի վավերագիր է՝ հայրենի ժողովրդի բարոյական ուժը, նրա հոգու հարստությունը վեր հանող, ընթերցողին հոգեպես ու բարոյապես հարըստացնող վավերագիրը, հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի վառ դրսևավորում:

Հատուկ ուշադրության արժանի են հեղինակի այն ստեղծագործությունները, որոնց հիմքում ընկած է ժողովրդական բանահյուսությունը «Սասունցի Դավիթը», «Հազարան բլրույը», «Անիծած հարսը», «Թմկաբերդի առումը», «Փարվանան» և մյուսները:

Ի՞նչ արժի միայն «Սասունցի Դավիթը», որը միշտ էլ գրականագետները դիտել են որպես Թումանյանի հանճարի գորեղ դրսևավորում և ոչ թե ժողովրդական վիպերգի սոսկական մշակում: Այո, այստեղ նա վերցրել է ժողովրդական հանճարի երկնած շողշողուն աղամանը, բայց հղկել ու կատարեագործել է, այս անգամ լուսավորել իր հանճարի փայլով և նորից ժողովրդին վերադարձրել որպես բոլորովին նոր որակ: Թումանյանի մեկնաբանությամբ ավելի խոր ու ներհուն է դարձել Դավթի կերպարը, ավելի ցայտուն են դարձել նրա մարդկային առաքինությունները: Նա մարդասեր է, տնանկին օգնող, աղետալիկն ապավեն: Նա իր ժողովրդի խաղաղասիրության մարմնա-

ցումն է, բայց և օրհասի ժամանակ իր ժողովրդի մերկացրած սուրը՝ անվեհերությամբ հայրենի հողը պաշտպանելու և նրան ապառնացող չարին տապալելու համար:

Մարա Մելիքին պարտության մատնելուց հետո նա խաղաղասիրության կոչ է անում Մարա զորքին, բայց և զգուշացնում.

Դարձե՛ք եկած. ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մարա,
Բայց թե մին էլ գե՛նք ու գոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա՝

Հորում լինեն, քառսուն գազ խոր,
Թե ջաղացի քարի տակին—
Կեղենն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասնա Դավիթ, Թուր-Կեծակին.

Էն ժամանակ աստված գիտի,
Թե ով մեզնից կլլնի փոշման,
Մե՛նք, որ կեղենք անեղ մարտի,
Թե՛ դուք, որ մեզ արիք դուշման:

Ինչպես այս կարգի գործերում, այնպես էլ իր բոլոր երկերում հեղինակը իր ստեղծագործական հնարանքների, ձևերի, լեզվի ու ոճի մշակման ժամանակ միշտ հենվում է ժողովրդական ակունքների վրա, որ նրա բանաստեղծական խոսքը դարձնում է դիպուկ, խորիմաստ:

Նույն արժանիքներով է օժտված նաև Թումանյանի արձակը: Նրա սրտագրավ «Մերոնք» պատմվածքաշարը, «Գիքորը»: Իր արձակում Թումանյանն ստեղծել է գեղարվեստական կերպարների մի ուշագրավ պատկերասրահ՝ ազնիվ ու շիտակ գեղջուկներ՝ երբեմն երկչոտ ու միամիտ, երբեմն բողոքող ու ըմբոստ: Այդպիսի կերպարների մեկը չենք հանդիպել ոչ Մուրացանի երկերում և ոչ էլ գյուղագիրների մոտ: Դրանք գուտ թումանյանական հայտնագործություններ են: Նրա արձակն աչքի է ընկնում կյանքի երևույթների վերլուծման նոր եղանակներով, հերոսների ներքնաշխարհի նուրբ վրձնումներով:

Հեղինակը թախծում է իր հերոսների հետ միասին: Ընթերցողն իր հերթին խորունկ ցավ ու կարեկցություն է զգում նրանց ճակատագրի համար: Ողբերգական է «Իմ ընկեր Նետոն» պատմվածքում Նետոյի ճակատագիրը:

Ջավելչտական երանգ ունի հեղինակի արձակը: Տեղ-տեղ նա լայնորեն օգտագործում է երգիծական հնարանքներ, իր հերոսներին դնում է ծիծաղելի վիճակների մեջ, օժտում բնավորության ու վարքի ծիծաղաշարժ հատկանիշներով:

Ծիծաղելի վիճակի մեջ է նրա Գաբո բի-

ճան: Ծիծաղելի է Նետո բիժոն արարքը. «քարաքաղնիսով» Կիրակոսին բուժելու նրա փորձը ողբերգական էլք է ունենում:

Այս գործերում բարեհոգի է հեղինակի ծաղրը: Նա ծաղրում է, բայց չի դատապարտում իր հերոսներին: Մեղավորը նրանք չեն, այլ նրանց կյանքի պայմանները՝ գյուղի հետամնացությունը: Ինչպես ընդունված է ասել՝ Թումանյանի այս գործերում ծիծաղի տակ արցունքներ են թաքնված:

Այլ է Թումանյանի ծիծաղը իր բազմաթիվ հեքիաթներում: Օրինակ՝ նրա «քաջ» Նազարը վախկոտ է, ապաշնորհ, ալարկոտ, բայց պատահականությունները նրա ձեռքը գալիս են տալիս. նա դառնում է երկրի տեր և հռչակվում քաջ, խելոք, գործունյա: Այս անգամ նա իրավունք է համարում ծաղրել աշխարհի վրա. «Ինչ քաջություն, ինչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս—քե՛ֆ արա»:

Այս սևգամ հեղինակի ծաղրն անողոր է, դատաւիետող, որովհետև նրա առարկան հասարակական չարիքն է:

Հարկ կա հատուկ կանգ առնելու Հովհ. Թումանյանի գործունեության մի կարևոր կողմի վրա: Իր գրական-հրապարակախոսական գործունեության ընթացքում նա հանդես է գալիս որպես ազգերի բարեկամության և համագործակցության ջերմ քարոզիչ: Գաղափարական այս հիմքի վրա է բարձրանում նրա հույակապ ստեղծագործությունը, որը, իրոք, լինելով իր ժողովրդի ամենամեծ իրական ձգտումների գեղարվեստական մարմնավորումը, միաժամանակ աշխարհին է, մարդկությանը:

Օրագրային գրառումներից մեկի մեջ հանճարեղ բանաստեղծը զարմանալի հրատակությամբ բանաձևել է ազգերի համագործակցության վերաբերյալ իր ըմբռնումը. «Ամբողջ մարդկությունը,—գրում է նա,— մի ընտանիք է: Ժողովուրդները էդ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը—երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երջանկությունը դարձնել ամեն մեկի երջանկությունը»:

Այս դատողության մեջ բանաստեղծը ներդրել է իր ժողովրդի «անքեն հոգին», նրա ամենամեծ իրական ձգտումը, նրա խաղաղ կյանքի կարոտը, որին խորթ է «արյունի ու պատերազմի, սրածության և ավերածության» մոլուցքը:

Եվ, քանի որ ազգերից ամեն մեկն իր դերն ունի «երջանիկ դարձնելու ամենքին», անհրաժեշտ է, որ ժողովուրդները մերձենան ու ճանաչեն իրար, ուսումնասիրեն ու յուրացնեն իրենց հարևանի սսելիքը: Այս-

տեղ արդեն բացառիկ ու անգնահատելի դեր ունի կատարելու գեղարվեստական գրականությունը:

Ժողովուրդների անխառն ձգտումներն արտահայտված են ամենից առաջ նրանց բանահյուսության մեջ: Սասունցի Դավիթը, ռուսական բիլինաների հերոսներ Իլիա Մուրոմցին, Սվյատոգորը, սերբական Մարկոն, ադրբեջանական Քյոր օղլին, կովկասյան առասպելների հերոսները ապրում են իրենց ժողովուրդների նվիրական շահերով. նրանք հարազատ ու սրտամոտ են բոլոր ժողովուրդներին, բոլոր ազնիվ մարդկանց: Ահա այդ ձևուման, այդ ուժի բացահայտումն է, որ ծառայեցվելու է բոլոր ժողովուրդների մերձեցման վեհ գաղափարին: Թումանյանը ձգտում է, որ հայ մարդը ճանաչի ու սիրի այլ ժողովուրդների ստեղծած փայերգությունը և անգուգական թարգմանությամբ հայ ընթերցողին է ներկայացնում դրանք: Հատկապես «ռուսական փոխարի գյուղացու՝ ծերուն Իլիայի» մասին խոսելիս, որը հայ-բեմիքի օրհասի ժամանակ, մոռացած «իշխանավորից գուր տեղը ստացած վիրավորանքը», կովի է դուրս գալիս իր երկիրը պաշտպանելու համար, ցանկանում է, որ իր «ախպերացուների» շարքում միշտ զգա մաս Սասունցի Դավիթին որպես հուսալի նեցուկի, միայն թե նա «ուղի իր մեջքը և դուրս գա Մարա Մելիքի փորած հորից»:

Տարբեր ժողովուրդների հոգեպես իրար շաղկապելու բարձր հատկություններով են օժտված նաև մեծ գրողների ստեղծագործությունները: Թումանյանը շեշտում է. «Եբրայիկն է ամենամեծ աշխարհակալը. նա իր գայիստնի տակ է պահում ոչ միայն Անգլիան, այլև ամբողջ աշխարհը. նա բոլոր ժողովուրդներին է մոտեցնում ինչպես անգլիական ազգին, էնպես էլ իրար»: Այդպիսին է նաև ռուս գրականության տիտանը՝ Լև Տոլստոյը, որն իր ամբողջ կյանքում միայն «գերագույն ապավեն էր որոնում, Աստված էր որոնում տառապող ու դժբախտ մարդկության համար և գտնում էր նրան ոչ թե ուժի մեջ, այլ արդարության, ճշմարտության, ներքին բարոյական մաքրության և այն սիրո մեջ, որ հավասարեցնում ու եղբայրացնում է մարդկանց. նա մտածում, ցավում ու գրում էր ամբողջ աշխարհի համար»:

Հայ ժողովրդի մեծագույն առաքինություններից մեկն այն է, որ ողջ էությունը ձգտում է «ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգացմունքներով, մտնելու առաջադեմ ազգերի եղբայրության մեջ ու նրանց հետ միասին երազելու կյանքի վսեմ երազները. նրանց հետ միասին մասնակից լինելու համարդավային մեծ խնդիրների մշակույթի

ազնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանք: Եվ մեր բախտավորությունն էն է,—ավելացնում է բանաստեղծը,—որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք... Եվ սրանով է թանկ մեր հարցը, սրանով է իմաստալի մեր կոիվը, սրա մեջ է մեր իրավունքի ամբողջ վսեմությունը»:

Բանաստեղծը մեծ նշանակություն էր տալիս Արևելյան Հայաստանի ազատագրմանը ռուսական բանակի կողմից: Դարերով պարսկական լծի տակ հեծող հայ զանգվածները աղոթքով ու արտասուքով են դիմավորել ռուսական ազատարար զորքին: Դա բախտորոշ նշանակություն է ունեցել հայության համար և, ինչպես բանաստեղծն է վկայում՝ «հենց էնպես աղոթքով ու արտասուքով էլ արձանագրվեց ու հավերժացավ «Վերք Հայաստանի» մեջ»:

Հայ բանաստեղծը միշտ երախտագիտության զգացմունքով էր հիշում, որ հայերս Ռուսաստանի շնորհիվ միայն «կոտորածից ազատվել ենք, թվով բազմապատկվել ենք, կույտորապես առաջ ենք գնացել և դեռ սպասում ենք ավելի լավ օրերի»:

Ռուս առաջավոր մտածողներ Յուրի Վեպեկովսկին, Վալերի Բրյուսովը, Մաքսիմ Գորկին և ուրիշները, թարգմանելով և հրատարակելով հայ բազմադարյան բանաստեղծության, արձակի և թատերգության լավագույն նմուշները՝ «լուսավոր աշխարհին ճանաչեցրին մեր հանճարը», միևնույն ժամանակ՝ «մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունն ու գեղարվեստական գործերը հիացումով լայն հրապարակ հանելով... փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները կապում են իրար»:

Այդ գործերակերպը մեծ ապագա է խոստանում: Նոր սերունդը նրանց օրինակով նոր քայլեր է առնում այդ առողջ գետնի վրա: Բայց բանաստեղծը ականատես էր նաև տրամագծորեն հակառակ գործելակերպի, որը սկիզբ էր առնում կառավարական շրջաններից և պաշտպանվում հետադիմական ուժերի կողմից: Նա տեսնում էր ինքնակալության անմարդկային վերաբերմունքը փոքր ժողովուրդների, հատկապես աշխատավորական խավերի նկատմամբ և ամբողջ ուժով ընդվզում դրա դեմ: Նա այն առաջին հայ մտավորականներից էր, որ հրապարակորեն բողոքեց ինքնակալության ազգային քաղաքականության դեմ՝ հայկական եկեղեցական-ծխական դպրոցների փակման և եկեղեցական կալվածքների գրավման օրերին: Հետագայում, բանավեճի մեջ մտնելով «Մոսկովսկին վեղումստի»

թերթի խմբագրի հետ, որը միշտ վերապահությամբ էր արտահայտվում հայ-ռուսական հարաբերությունների անկեղծության նկատմամբ, նրան կշտամբում էր, որ պաշտոնաթերթի մասն վարքագիծը «փչացնում է Ռուսաստանի պատմության էն լավ էջերը, որ ստեղծել են լավագույն ուժերը ուս ժողովրդի»:

Հովհաննես Թումանյանը բացառիկ դեր կատարեց անդրկովկասյան ժողովուրդների մերձեցման գործում: Այդ մերձեցման կենդանի օղակը դարձավ: Թիֆլիսի բազմազգ հասարակության առաջ ունեցած իր հրապարակային ելույթներում, հոդվածներում, գեղարվեստական ստեղծագործություններում, վրացական և ադրբեջանական գրական մտավորականության հետ ունեցած ամենօրյա շփմամբ՝ նա օրը-օրին դարբնեց այդ մերձեցումը:

Անկեղծ ու սրտաբուխ են Թումանյանի նամակները վրաց գրողներին, վրաց ժողովրդին նվիրված նրա բանաստեղծությունների շարքը: «Միայն գիտությունը, գրականությունը և արվեստը կլցեն այն անդունդը, որ բաժանում է ժողովուրդներին, և միայն նրանք կստեղծեն ապագա լավագույն կյանքը և իսկական մարդուն»,—գրում է նա:

Թումանյանը նույնպիսի սերտ կապեր ուներ նաև ադրբեջանական ժողովրդի հետ: Հայտնի է նրա բոլոր գործունեությունը 1905 թվականին, երբ ինքնակալության դրդմամբ երկրով մեկ ծայր էին առել հայ-ադրբեջանական եղբայրասպան կոիվները: Երբ բանաստեղծը սպիտակ դրոշմ ձեռքին դիրքից-դիրք էր անցնում և հաշտեցնում կոիվող կողմերին: Հետագայում, խոսելով այդ ջրջանում իր կատարած դերի մասին, այն համարում էր իր գործունեության ամենափայլուն էջը, որով ավելի էր հպարտանում, քան հայ գրականությանն ու ժողովրդին մատուցած այլ ծառայություններով:

Պատահական չէ, որ իր լավագույն պատմվածքներից մի քանիսը Թումանյանը նվիրել է այս երկու ժողովուրդների բարեկամության հարցին: «Ալլահից դրկվածը», «Ահմադը» հայ-ադրբեջանական բարեկամությունը խորհրդանշող գեղարվեստական գործեր են:

Այս պատմվածքները, չնայած ծավալով փոքր են, բայց մարդկային հոգու վրա խորապես ներգործելու իրենց կախարդական ուժով ազգերի բարեկամության մասին զգրված չգերազանցված գործեր են, ընդունակ ընթերցողի աչքերից արցունք քամելու և նրա մեջ առաջ բերելու այլ ազգերի նկատմամբ հարգանքի ու սիրո վեհ զգացմունքներ:

Այդ պատմվածքներում Թումանյանը ար-

դեն գեղարվեստական խառնի հզոր միջոցներով միա ու արյուն է տալիս իր այն տեսությամբ, թե՛ «ժողովուրդները, հակառակ կրոնական տարբերությունների, միշտ իրար բարեկամ մնալու հակամետ են... թըշնամությունը, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ՝ արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը՝ բնական և շատ ավելի ուժեղ, քան թե կարծում են մեզանում... թե մենք՝ կովկասյան ժողովուրդներս եղբայրներ ենք հավերժ կողք-կողքի, ինչպես մեր հայրենի լեռները՝ ամեն մեկն իր տեղում, իրենց շողշողուն գազաթերթով միշտ կանգնած միմյանց թիկունքին և իրենց հիմքերով միացած»:

Թումանյանի մեծությունը նաև այն բանի մեջ է, որ բոլոր պատմական իրադրությունների մեջ էլ հասակորեն զանազանում է կառավարական շրջանների, ստանձին անհատների և բուն ժողովրդի վարքագիծը: Հայ ժողովրդի կոտորածներին ականատես բանաստեղծը անարգանքի պլունին է գամում Աբդուլ Համիդի ու երիտթուրքերի արյունոտ գործերը, բայց հեռու է այդ անավոր հանցագործությունները ժողովրդին վերագրելուց: Առաջին աշխարհամարտի ժամանակ Կովկասի հայոց գրողների ընկերության անունից աշխարհի գրողներին ու մամուլին ուղղված կոչի մեջ, դատապարտում է թուրք ջարդարարների ցեղասպանության անմարդկային քաղաքականությունը: Նա գրում է. «Համաշխարհային իրարանցումի մեջ, շրջափակված ու մեն մենակ իր դարավոր գոհի հետ, թուրք կառավարությունը (ընդգծումը մերն է—Գ. Մ.) վեր է կացել գերազանցելու իր մինչև օրս կատարած ոճիրները, կոտորածով մի անգամ ընդմիշտ վերջ դնելու հայ ժողովրդի բողոքին ու դատին: Սկսել է կոտորածը Էրզրումից մինչև Կիլիկիան, Սև-ծովից մինչև Միջագետք»:

Իսկ 1920 թվականին Բյազին Կարաբեքիրի հրոսակների կովկասյան արշավանքի օրերին Թումանյանն ավելի որոշակիորեն է ընդգծում իր այդ համոզմունքը. «Հոգեվարքին հասած Տաճկաստանը իր վերջին վատություններն է անում հայ ժողովրդի հետ: Տաճկաստանը էստեղ ես ասում եմ է՛ն վատթար կառավարությունը, որ միշտ զբաղված եղավ ուրիշի տները քանդելով և իր համար էլ տուն չլինեց: Եվ բնավ ես նկատի չունեմ տանիկ հասարակ ժողովուրդը, որ պիտի ապրի և ավելի լավ պիտի ապրի Էսօրվա կառավարության մահից հետո»:

Ինքնակալության տապալումը լայն հեռանկարներ էր բացում կովկասյան ազգությունների հետագա մերձեցման և իր ամբողջ կյանքով այդ մերձեցմանը ձգտող մեծ բանաստեղծի բեղմնավոր գործունեության

համար: 1919 թվականին նրա նախաձեռնությամբ ստեղծվում է «Կովկասյան ազգերու կուլտուրական միությունը», հետագայում նաև՝ «Բանաստեղծների եղբայրությունը», որոնց նպատակն էր մշակութային համագործակցության ջերմ մթնոլորտ ստեղծել և բոլոր միջոցներով նպաստել կովկասյան ժողովուրդների խաղաղ բարգավաճմանը:

Մեծ հոգու տեր մարդ էր Թումանյանը, մեծ ստեղծագործող: Իրոք նա լույս էր սրբիում իր շուրջը և լույս տալով էլ սպառվեց: Պայծառ մնաց նրա լույսը հայության վրա, Կովկասի վրա, աշխարհի վրա:

Այսօր Թումանյանի երկերը համաշխարհային ճանաչում են գտել: Այդ երկերն այսօր իրենց մայրենի լեզվով կարդում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ինչպես նաև անգլիացին ու պարսիկը, գերմանացին ու ճապոնացին, ֆրանսիացին ու ռուսները: Կարելի է բերել այլազգի բազմա-

թիվ գրողների անուններ, որոնք կենդանության օրոք շփվել են Թումանյանի հետ, վայելել նրա բարեկամությունը, կամ տարիներ անց, ծանոթանալով նրա ստեղծագործությանը, խորապես գնահատել են այն, բանաստեղծություններ ու հոդվածներ գրել նրա մասին, ցույց տվել նրա արծարծած գաղափարների համամարդկային բնույթը, գեղարվեստական խոսքի ասպարեզում նրա կատարած ներդրման համաշխարհային նշանակությունը:

Ահա այս բոլորով Թումանյանը դարձել է մեկը այն ազգային գործիչներից, որոնք միշտ ընթանալով կյանքի հետ, միշտ ականջալուր հայրենի ժողովրդի սրտի զարկերին, ամեն կերպ հոգեկան կապեր ստեղծելով նրա և այլ ժողովուրդների միջև, իրենց կյանքով ու հիշատակով ժողովուրդներին առաջնորդում են դեպի բարին, դեպի լույսը:

